

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՀՈԳԵՎՈՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Եկեղեցու ճանաչված գործչի համար բանաստեղծությունը հոգևորությունից ելք փնտրելու վարժանք չէ, ինչպես ժամանակին վարվում էին Մխիթարյան միաբանության գիտնական այրերը՝ առօրյա խճողումներից դիմելով սիրողական «զբոսանքների»: Այս պարագայում Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի բանաստեղծական որոնումները հետամտում են կյանքի օրինաչափ երևույթների գնահատությանը, երբ ամեն ինչ վերստուգվում է աստվածայինի ավազանում, երբ խղճմտանքի ու հավատի ձայնը տիրապետում է աշխարհիկ բազմաձայնության մեջ: Անտարակույս, այս մտայնության թելադրությամբ է նա ընտրել անպաճույճ ու անհավակնոտ «Ներսես Վանական» գրչանունը:

Երևույթը չի կարելի, ինչ խոսք, բացատրել միայն կրոնական ճանաչողությամբ: Հարկ է արդեն հիշատակել «հոգևոր» բառի լայնալիր իմաստները, որոնցով ողողվում են մեր ներաշխարհի բոլոր զգացումները, որոնք չեն հանգում միայն եկեղեցական հասկացողության:

Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի կենսագործունեությունը եղել և մնում է հայոց առաքելական Եկեղեցուն անմնացորդ ծառայության օրինակ: Տասը տարի շարունակ, 1982-ից ի վեր, նա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետն է, որն իրագործում է միաբան համախումբ քաղաքականություն: Ծնվել է 1937-ին պատմական Կիլիկիայում, գաղթել Բեյրութ, ուր հաճախել է Նուպարյան ազգային վարժարան: Անթիլիասի Դրեվանքը նրան մեկընդմիշտ կապում է աստվածայինի խորհրդին: Եվ պատահական չէ, որ քսանամյա հասակում ներգաղթելով Հայաստան՝ Ն. Պոզապալյանը ուսումը շարունակում է Մայր Աթոռի հոգևոր ճեմարանում, որից հետո կատարելության ձգտումով հասնում Անգլիա և Շվեյցարիա՝ աստվածաբանության հիմնարար կրթություն ստանալով «Հարության քոլեճ»-ում, այնուհետև՝ Ժնևի Էկումենիկ ինստիտուտում: Էջմիածին վերադարձից հետո նրան վստահում են հոգևոր ճեմարանի տեսչի աշխատանքը, սակայն որոշ ժամանակ

անց Կաթողիկոսը նրան նշանակում է Շվեյցարիայի հայոց թեմի հոգևոր հովիվ: Շուտով նրան կարելի էր արդեն տեսնել ամպամած Ալբիոնում՝ որպես հայ առաքելական Եկեղեցու Անգլիայի թեմի առաջնորդ: 1983-ից ի վեր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական մարմնի անդամ է:

Այսօր նորագույն բանաստեղծությանը ներհատուկ է բարդույթներն անընդմեջ հոսքով ընթերցողին «հանձնելու» միտումը, խճողումը հոգնեցնելու չափ ու աստիճանով «վարպետություն» համարելը. որքան գլխապտույտ ու գահավեժ արագությամբ հաջորդեն պատկերակառույցները, որքան խրթին ու մթամած լինեն նրանք, երբ ընթերցողը հաճույքը որսում է ոչ թե գեղեցիկի շփումից, այլ բանաստեղծական պատկերները որոշակի տեխնիկական «իմացության» շնորհիվ ճանաչելու ընդմեջեն,—այնքան, չգիտես ինչու, մեծ է թվում քերթվածի գեղագիտական արժանիքը: Սակայն բանաստեղծական պարզությունը երբեք էլ հակընթաց դատողության չի հանգում:

Ընդհակառակը, Ներսես Վանականը գիտակցորեն ընտրելով պարզ բանաստեղծության տիրույթը՝ ճշտում է և իր վերաբերմունքը, «ապառված» ենթաժանրի նոր հնարավորությունների նկատմամբ ունեցած հավատը:

— Հին ու սիրած իմ երգերից դուք գիտե՞ք,—
Հարցրի ես անցորդներին փողոցի.
Դառն ժպտացին, անպատասխան գնացին,
Սիրտս մնաց ցուրտ գիշերվա ճամփեքին:
Իբր ափոփանք՝ հին օրերից անթեղված
Միայն մի կայծ ջերմացնում է իմ հոգին:

Սա թերևս հիշատակված «տեխնիկական» պակաս դժվարություններ չունի: Այստեղ ագուցվում են պատկերների վճիտությունը, բանաստեղծական թեմայի խորունկ նպատակը՝ գլխավոր կիզակետից բխող պահանջին. պատգամը մատուցվում է մատչելիության սկզբունքով, նրան չեն խառնվում այլազան, կողմնակի խնդիրներ: Երգի պարզությունը բանաստեղծական վաղքի վկայություն է.

Շարականների, տաղ ու գանձերի
Երգով եմ ուզում երկինք բարձրանալ
Եվ իմ երգի մեջ ուզում եմ դնել
Իմ ողջ էությունն ու անէանալ:

Ի՞նչ զգլխիչ է լինել հանդիման
Կյանքի արարչին այս սուրբ տաճարում,
Թոթափել այստեղ փառքի ցնցոտին,
Մանկանալ, պարզվել ու պայծառանալ:

Ն. Վանականը հրապարակ է հանել բանաստեղծական մի քանի ժողովածուներ՝ «Տեսիլք Յաւերժական» (Վենետիկ—Ս. Ղազար, 1989), «Հավերժ պատարագ» (Վենետիկ—Ս. Ղազար, 1990), «Ավանդ հավերժական» (Ս. Էջմիածին, 1990), «Քնար հովվական» (Ս. Էջմիածին, 1991): Վերնագրերն արդեն բացահայտորեն հուշում են բանաստեղծությունների կրոնարմատ ուղղությունը: Աստվածաշնչյան և ազգային-կրոնական երգերը գեղար-

վեստական թարմ մեկնաբանումներով կազմում են ստվար մաս վերջին առավել ամբողջական ժողովածուի մեջ, ուր զետեղված են հեղինակի՝ վերջին տարիներին գրված լավագույն ստեղծագործությունները:

Ուշագրավ է «Քնար հովվական» գրքի մեջ բանաստեղծի բացած գեղարվեստական ընկալման հոգևոր «պատուհանը», գեղագիտական այն չափակշիռը, որով հասու ենք դառնում ներքին այրման ճյուղավորումներին: Այս իմաստով ծրագրային պիտի դիտել «Սակավ ընտրյալք» բանաստեղծությունը, որով եզրափակվում է ժողովածուն, ուր բանաստեղծական խոսքը ճանաչվում է որպես «անբառ աղոթք», «ուխտի կոթող», պարզ մարդուն՝ Աննունի հետ՝ «հավերժ կյանքին կապող օղակ»: Այսպիսով, բանաստեղծությունը, լինելով հանդերձ «երկինք բարձրացած պաղատանք», չի ներփակվում սոսկ եկեղեցական «տարածքում», այլ բացվում է հավատավոր աշխարհին՝ միահյուսելով հոգևոր և աշխարհիկ բաց դռները: Մեր կարծիքով, այստեղ պիտի որոնել Ն. Վանականի գեղարվեստական աշխարհի դիմորոշ հատկությունը, նրա ստեղծագործության՝ աշխարհին պարզված ավազանը: «Հովվական» սահմանման մեջ նախորոշված է արդեն հոգևոր-բանաստեղծ-առաջնորդը, իսկ «քնարը» այն ազնիվ հոգեկանչն է, որին մղվում է ընթերցողը, ինչպես հավատացյալը՝ իր ոգեկազմ ընտրյալին:

Աստծո և աստվածայինի թեման Ներսես Վանականի ստեղծագործական տարերքն, է. հետևելով միջնադարյան տաղերգուների կառուցողական շարքերին, հոգևոր երգերի, շարականների ավանդական մոտիվներին՝ նա Աստծո կերպարի տակ որոնում է Էության, խորհրդի ակունքը, գոյության իմաստն ու առհավատչյան: Նրա համար ևս կենսական է ճանապարհի ու ճամփորդի իմաստավորումը: Ճանապարհը դեպի Էության խորքը ինքնամաքրումն է, սրբացումը, աստվածային հաստողությունը, որի հաճախանքը ժամանակի մեջ դույզն-ինչ որսում են միայն բանաստեղծները: Թումանյանական «բարձրից» հսկվող այդ ճանապարհին Ն. Վանականն արժևորում է իր առաքելությունը որպես ճամփորդի պայծառատեսություն: Ճամփորդ, որ թարգմանն է մեր հույզերի, մեր տագնապների: «Ռեքվիեմ» ստեղծագործության մեջ խորագնա է դառնում «ճամփորդի» մտասևեռումը: Կարճառոտ մեջբերելով Աստծո և աշխարհի քրիստոնեական իմաստալից զրույցը՝ բանաստեղծը փորձում է Ամենաբարձրյալին հասցնել մեր երկրային թըրթիռները, մեր կորուստների փիլիսոփայությունը, որոնք տարերքի հզորությամբ թափվել են ժողովրդի գլխին: Լավատեսության հորդորը բխում է մարդասիրության անքեն ճանաչումից.

Ուսո՛ մեզ, Տե՛ր, զոհողություն
Ներել նույնիսկ մեր թշնամուն:

«Խոսք երախտիքի» բանաստեղծության մեջ քնարական հերոսը նկատում է և ուրիշ «ճամփորդների», որոնց բարոյական նկարագիրը նախապատրաստել է իր մուտքը, սերմանելով գութի, օրհնության ու զոհաբերության հինավուրց պատգամները: «Փափագ» բանաստեղծությունը նպատակասլացորեն բացում է «ճամփորդի» («ճամփորդների») ներաշխարհը, ցույց տալիս բարության հունդը: Այստեղ առանձին ջերմությամբ վերարծարծվում է Վ. Տերյանի հերոսի հայտնի ցանկությունը՝ «Լինեի չոբան սարերում էն սեգ», սակայն՝ ժամանակի ու միտումի ընդգծված յուրահատկությունը Ն. Վանականի մոտ որոշակի է: Սիրո հովվերգությանը գալիս է փոխարինելու հո-

գևոր բարոյականությունը՝ շաղախված աշխատանքի, բնապաշտության, արտի պարզության փառաբանումներին: Արդար աշխատանքից հոգնաբեկ՝ հերոսը աղոթարանում աստվածային խորհրդով լեցուն լույս է ստանում, ոչումը տրվում է ինքնաբուխ, սակայն ոչ մեկուսի, այլ նպատակասլացումարդասիրության բաց դուռն է, և պատահական չէ, որ այն կապվում է Մ. Մեծարենցի, Հովհ. Թումանյանի բանաստեղծ համակարգի՝ «անանձնականի»՝ լույս տալով սպառվելու հումանիստական թեզին, որի նախնական բարձրագույն օրինակը հենց Հիսուս Քրիստոսն է.

Սարի լանջին, պուրակի մոտ,
Մի հին վանքում ծվարեի,
Առավոտյան աղոթեի
Եվ օրնիբուն աշխատեի:
Մոտի առվից ջուր բերեի,
Ծառ ու ծաղիկ աճեցնեի,
Քրտինքս արդար ես թափեի,
Ցիլ ու ծաղկին նոր կյանք տայի:
Երեկոյան՝ խոնջած, դադրած,
Աղոթարան ես մտնեի,
Մոմի նման բոցկլտայի,
Լույս ստեղծի, սպառվեի:

Քրիստոնեական թեման Ն. Վանականի բանաստեղծություններում ունի և ազգային տառապանքի զուգակշիռը. «Ավանդ հավերժական» պոեմում, վերաշարադրելով Տրդատի, կույսերի ու Գրիգոր Լուսավորչի զրույցները, հեղինակը այն դիտում է հայոց աշխարհի պաշտպանության ազնիվ մտահոգությամբ: Պոեմի վերջին տունն իր մեջ ամփոփում է բանաստեղծական հետևողական կարևորագույն գաղափարը՝

Ո՞վ հրաշք անճառ, տեսի՛լ դու լուսե,
Օրհնյալ Միամոր Որդի դու, լսե՛
Մեր Լուսավորչի աղերսն անդադար.
«Լե՛ր հայր ու պաշտպան ազգիս դարե-դար»:

Ն. Վանականի բանաստեղծությունները անընդմեջ կրճատում են մարդու և աստվածայինի միջև ձգված տարածությունը. նրա քնարական հերոսը իրեն սահմանազատում է առօրյայի կեղևից, ներքին հաղորդակցման դիմաց համառող աղմուկից, երկրային այն բոլոր հրապույրներից, որոնք կաշկանդում են մարդու ինքնամաքրման ներընթացը: Սրա հետևանքով հովվական երգերի գերակշռող մասում հոգևոր-զգայական գործառույթները ձեռք են բերում առաջնային ներկապնակ՝ դուրս մղելով առարկայական-կենցաղային մանրամասները: Սա եթե կուզեք՝ հայեցողություն է, սակայն ներծծված հոգու աստվածաճանաչ ավազանում: Նոր, կրոնական հակվածությամբ՝ բանաստեղծությունը վերաճում է համամարդկային հիմնի, բարության ու լույսի ակունքի:

Այնուհանդերձ, ստեղծվում է մեծ ապասման և ապասման հանդեպ բանաստեղծի հարցադրում-տարակույսների ներքին դրամատիզմ, որն արդեն անհաղթահարելի է բանաստեղծական պատկերի մեջ, քանի որ քնարական հերոսը դեռ չի գտնում ազգային մտահոգությունների բազում պատասխաններ: Նկատվում է, որ Ն. Վանականին չեն բավարարում այն ձևակերպումները, որոնցում առկա են եկեղեցական ավանդապահ հույզերը: Բանաստեղծը դեմ է նաև կրոնական ներազգային մոտիվների «ինֆլյացիային», դեմ է, որովհետև մեկ քայլ է ընդամենը աստվածաշնչային սուրբ պատգամների, հոգևոր-ազգային համադրումների շահարկումից մեզ և իրեն բաժանողը: Ուղղակի նրա համար քրիստոնեությունը բարձրագույն աշխարհայացք է, շահագրգիռ դիրքորոշում, փիլիսոփայական տրվածք, հետո նոր միայն մշակույթի դաշտ:

Բանաստեղծական թեմատիկ ուղղությանը զուգահեռ Ն. Վանականը թափանցում է աշխարհիկ սյուժետային բազմապիսության մեջ: Այստեղ նրա համար սահմանագիծ է դառնում 1988 թվականը՝ իր երկու հիմնարար ճյուղավորումներով: «Քնար հովվական» ժողովածվի մեջ առանձին բաժին է հատկացված ազգային զարթոնքի գեղարվեստական արծարծումներին՝ «Հող հայրենի» խորագրով: Մարտական աշխույժ շեշտերն են այստեղ բնութագրական: Ծավալուն «Հերոսական» ստեղծագործության մեջ մանրամասնորեն վերաշարադրելով ազգային պատմության կեռմանները՝ հեղինակը չի խուսափում գաղափարական հայտնի ուսույցներից: Դրանով նա որոշ չափով վտանգի տակ է դնում գեղարվեստականության տարրը: Սակայն նկատված որոշ ձգձգվածության փոխարեն կարծես նա շահում է պայքարի անկաշկանդ շնչով, որը դառնում է ոգևորիչ ելակետ շարքի մյուս երգերի համար:

Մեր հիշատակած երկրորդ թեման «պարտադրում է» բնությունը: Ավերիչ երկրաշարժը փոխում է բանաստեղծի խաղաղ, ներհուն ոճը: Այն դառնում է կրքոտ, հուզական, միաժամանակ՝ անել ու անընտել ազգակորույս իր խռովքով: Համաժողովրդական ողբերգական էջը բանաստեղծություն է մտնում նույնքան տարերայնորեն: Տիրոջն ուղղված խոհերը, տագնապները բազում հարցականներ ունեն. իրար են ագուցված ազգային շարժման, նորագույն տարագրության, աղետի, վաղվա օրվա մտորումները: Կրոնական անցյալ դասերը հուշում են Տիրոջ «պատժի» փորձի զուգահեռը: Եվ առանց այլևայլության ծնվում են տվայտալի դատողությունները.

Արհավի՞րք էր սա, թե՞ ևս պատուհաս,
Մեր գլխին եկած այսքան վաղահաս,
Մեր մեղքը ո՞րն էր, ո՞րն էր մեր հանցանք,
Տե՛ր, աղե՞տ էր սա, թե՞ ևս պատուհաս:

Բանաստեղծության մեջ վերհանված հակադրությունները բնական են արդեն իրենց անբնականությամբ. մի գծին՝ «կյանք, ծիծաղ, խնդություն», մյուսին՝ «մահ, փլատակ, մեռելություն»: Վերնագիրն էլ անհավակնոտ է, զուրկ գեղարվեստական պատկերային պատշաճությունից՝ «Աղետ», և ուրիշ ոչինչ: Ցավի արտահայտությունը նման մոտեցման մեջ ավելի առինքնող է, քանի որ հարվածն, իրոք, սահմռկեցուցիչ է: Անդոհանքին հաջորդում է աշխարհիկ դժգոհությունը, որը, հնչելով պարզ տողերի արանքից, բերում է առաջին հերթին աղետը, «որպես բաժակն այս լեռի» ուղղամիտ խոսք;

ժողովրդական վերաբերմունքի գնահատությունից հետո միայն Ն. Վանականը անցնում է խոհերի «աստվածատուր» սահմանը:

Աղետն արթնացրեց, ցնցեց աշխարհի խիղճը, մարդուն վերադարձնելով ի շրջանս բարության, մարդկայինի: Պատուհասված հայ ժողովուրդը ևս մի անգամ դառնում է աշխարհին ուղղված զգոնության, սթափության կոչ, բարության կամ, ինչպես հնում էին ասում, օճանի յուրովի ստուգության փորձադաշտ: Այնուհանդերձ, զոհողության, Աստծո սիրելին դառնալու քրիստոնեական խորհուրդն ընդունելով անգամ, բանաստեղծը չի կարողանում հաշտվել իրողության «առարկայական» դաժանության հետ, որովհետև ինքը նահատակվող հոտի հետ է, մարդկային ցավերի ու աղաղակների ականատեսը: Եվ եթե մի կողմից՝ նա սիսիթար ու ուժ է տեսնում Տիրոջ մեջ՝ նրա «մարդեղության այս սուրբ օրերին», ապա մյուս կողմից՝ երևան է հանում դիմադրական ազգային ոգին՝

Ծակատագրի հետ ես չեմ հաշտվում,
Ընդվզում եմ ես, անվերջ բողոքում...

Իսկ ահա «Բողոք» բանաստեղծության մեջ Ն. Վանականը քննում է երկրաշարժի բերած բարոյագիտության լծակները՝ կյանքի ճշմարտության և հասարակական արդարության նժարները: Աներկբա ու հատու է բանաստեղծի գրիչը. Սոցիալիզմը, ընդդիմանալով քրիստոնեության մարդերգության և Աստծո պաշտամունքի հայտնի կարգախոսներին, մղվեց ակամա, բայց և բութ համառությամբ սպանելու մարդու մեջ խիղճը, բարության հունդը, երջանկության խորհուրդը: Հետևանքը որոշ է. հասարակությունը, լայն իմաստով՝ «աշխարհն է դարձել նյութապաշտ, անկուշտ, խիղճ ու գութ չքվել»: Սթափ գրչի տակ դատապարտվում են հասարակական կյանքի բոլոր ինստիտուտները, հոգու և մարմնի բազմատեսակ լլկումները: Նորոգ իսահակյանական հայտնատեսությամբ Ներսես Վանականը բացում է կեղծիքի ու ստի վրա հիմնված մեր կոմունիստական ներքինը.

Ամեն բանից վեր շահն իրենց դասում,
Ծահատակում են, խտիր չեն դնում,
Չկա՛ սրբություն, չկա՛ ուխտ, խոստում,
Չկա՛ ոչինչ սուրբ, ոչ մի համոզում:
. . . . . .
Ո՞ւր ենք մենք հասել և ո՞ւր ենք գնում.
Ո՞վ պիտի ցնցի, սթափեցնի մեզ,
Որ անդրադառնանք ու շուտ ետ դառնանք
Անդնդի եզրից, նորից մարդ դառնանք:

Այստեղ բանաստեղծի ուժն է: Ի տարբերություն սակայն Ավ. Իսահակյանի գեղարվեստական մտայնության, Ն. Վանականը չի փախչում մարդկանցից դեպի անապատ, ավազուտներ: Եվ ինչպե՞ս հեռանա, չէ՞ որ իր ժողովրդի հովիվն է, անգամ պատվազուրկն ու անբարոյականը, գողն ու մարդասպանը հասարակական այս պայմանների պտուղն ու զոհն են, որ գրեթե ազգովին «դավաճանում ենք մեր իդեալին»: Հոգևորական բանաստեղծը, իհարկե, պատասխանատվությունից խուսափելու իրավունք չունի: Ընդհակառակը, նա որոնում է իր մեղքի բաժինը՝

Մենք երկուսով էլ, օհ, մեղավոր ենք,
Բավ է կեղծելով մենք միմյանց խաբենք ...

Բարձրաստիճան լուծումներ չկան այս բանաստեղծության մեջ: Կա պարզ ու լուսավոր ճշմարտությունը՝ հավատի վերհայտնաբերումը մեր մեջ, աշխարհիկի ու նյութականի ստորադասումը հոգու և խղճի, աստվածայինի դիմաց: Սա միայն քրիստոնեականի վերահաստատումը չէ, սա մարդու և մարդկայինի կենսական ճանաչումն է, որը կարող է գալ ինքնամաքրումից հետո.

Դա՞ռ իմաստության և զգաստության ....
Ծանի՛ր քեզ նորից ...

Մարդու մղումը դեպի գեղեցիկը բացում է նրա մշտարթուն երկվությունը, որ դեռ դարեր առաջ Գ. Նարեկացու ստեղծագործական ներհան զգացումների դաշտն էր: Այսօր էլ նույնն են հոգևոր տառապանքի սահմանները, հոգու և մարմնի կռիվը, ուր շատ հաճախ բևեռացման շփոթը առաջացնում է մեր պոեզիային այնքան ճանաչելի տարուբերումները: Ն. Վանականի մի շարք բանաստեղծություններում («Մի՛ մերձենար յիս», «Հոգևոր խոհեր»-ի զանազան հատվածները, «Աղոթք առ Էջմիածին») քնարական հերոսը մաքառում է այս աշխարհի հույզերի և երկնային ճշմարտության միջև: Բնության կամքը հաղթահարելու ճանապարհով միայն կարելի է մերձենալ, հպվել աստվածային էությանը:

Այնուհանդերձ, կյանքի գեղեցկությունը վեր է ամեն ինչից: Գեղեցիկը բարին է, գութը, իսկ նրանց միասնությունն արդեն աստվածահաճո է: «Լեմանի ափին» բանաստեղծությունը արևածագի հրաշալի պատկեր է, ուր արևն ու լիճը հաստատում են աշխարհի ու բարձրագույն զգացումների հավերժությունը: Սերը լայն նշանակությամբ՝ դեպի մարդը, բնությունը, աստվածայինն ու խորհրդավորը, որը պիտի մեկնել քրիստոնեական պայծառատեսության իմաստի ներքո: Բնության խորհուրդը մարդկային կյանքի հետ կապված է նաև «Իմ նշենին» հուզաթաթավ բանաստեղծության մեջ: Ծաղկած նշենին այստեղ ևս համեմատության նույն զուգահեռներն է գծում՝ որպես հարս, զարթոնք: Ընդհանրապես Ն. Վանականի բնապատկերները թարմ են, իրենց պարզությամբ համակող և, անտարակույս, հոգեխորհուրդ: Պատկերի ավանդական սուբյեկտները չեն խանգարում գեղարվեստական ներքին նոր կապերի հյուսման, նոր հուզական իմաստների ձևավորման բանաստեղծի փորձին: Եվ այստեղ մենք տեսնում ենք նրա գեղարվեստական յուրահատուկ մեկ գիծը: Ահա, խնդրեմ, մեկ օրինակ:

Եվ մի զեփյուռ մոլորուն՝ ճյուղերի մեջ նշենու
Թափառում է ու հուզում ծաղկած ոստերն ապիտակ,
Փրփրում է նշենին, ալիք-ալիք պսպղում,
Ջրերն ինչպես Սևանի՝ կապույտ, անամպ երկնի տակ:

Այստեղ ծանոթ են զեփյուռը, նշենին, որ ծաղկել է, սակայն վաղեմի բանաստեղծական «առարկաները» շարժվում են բոլորովին նոր տարածության մեջ, նոր զուգահեռականներում: Անակնկալ է ճյուղերի ալիքվելը,

փրփրալը, որը հանգեցրել է Սևանա ջրերի արդեն նորահայտ համեմատությանը:

Բնության հորդուն պատկերները որոշ իմաստով ուղղություն են հաղորդում գեղարվեստական մտածողությանը, համակարգում խոսքը, արում նրա հեռագնա ալացքը՝ պահելով ընթերցողին հմայքի հարատևության անտես հյուսվածքում: Ասվածը տարածվում է «Տարերքի երգով», «Նոնենիս», «Մոլորված մեղուն», «Արփայի հովտում» և այլ երգերի վրա: Անմոռաց է հավերժության հետ քայլ պահող Արփան՝ լեռնային գետը, որի բացած ճանապարհը բանաստեղծն անընկատելիորեն համեմատում է ժողովրդի երթի հետ՝ վերջին տան մեջ կերտելով ժողովրդական ակունքին փարվող քնարական հերոսի հայտնության նոր վիճակը, որը և՛ իմաստալից է, և՛ աստվածային.

Իմ սիրտը պապակ՝ կարոտով անհուն,
Դարավոր երգիդ թովչանքով զեղուն,
Եկել-նստել է հովտում երկնային,
Իր հոտը գտած եղնիկի նման:

Աստվածայինի և բնության թեմաները, մեր կարծիքով, գերիշխում են Ներսես Վանականի ստեղծագործական աշխարհում: Դրանց միջոցով նա հիմնականում հաղորդակցվում է մեծ աշխարհին, գեղագիտական հարցադրումներին: Հենց այս հանգամանքը առավել տարողունակ է դարձնում այդ երկու թեմաների ընկալումների դաշտը, լայն խորքով է բացվում պատկերի, բառի ենթիմաստը: Սուղ միջոցների օգնությամբ, համենայն դեպս, հայոց առաքելական Եկեղեցու նշանավոր արքեպիսկոպոսը տալիս է իր վերաբերմունքի, իր գնահատությունների գունեղ ներկապնակը, այն տպավորում է, մնում բանաստեղծության սիրահարների ազդեցության ոլորտում:

Գեղարվեստական մտածողության հոգևոր «պատուհանը» բաց է կրնկի վրա: Այն հրավիրում է զրույցի, ամրակայում հավատը: Հովվական երգերում հայրենիքը հողի և ոգու միասնության փառաբանումն է: Սուր հասարակական հայացքը շիտակ ու պայծառ, դարձի բերող և ներող խոսք է:

Եվ ի վերջո, ամենագլխավորը. Ներսես Պոպազալյան-Վանականի երգը, եթե տագնապներ ունի, ապա միայն հոգու անաղարտության պաշտպանության ու վերադարձի համար: Այդ տագնապից է սնվում սերը դեպի մարդը: Այդ սիրուց էլ սկսվում է հոգևոր այն մեծ ճանապարհը, որ տանում է դեպի մարդկայինի կատարելատիպը, դեպի ինքնամաքրում:

Բանաստեղծությունը երթ է առ Աստված:

Անվախճան այդ երթի ուխտավորներից է Ներսես Վանականը:

Աստված օգնական: